

**ԱՆԵԶԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ
ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ
NON-SINGULAR NOUNS (PLURALIA TANTUM) IN LITERARY EASTERN
ARMENIAN, GERMAN, AND RUSSIAN**

**НЕЕДИНИЧНЫЕ СУЩЕСТВИТЕЛЬНЫЕ (PLURALIA TANTUM) В ЛИТЕРАТУРНОМ
ВОСТОЧНОАРМЯНСКОМ, НЕМЕЦКОМ И РУССКОМ ЯЗЫКАХ**

Աննա Սողոմոնյան
Anna Soghomonyan
Анна Согомонян

Երևանի պետական համալսարան, Հայաստան
Yerevan State University, Armenia
Ереванский государственный университет, Армения

annasoghomonyan@ysu.am

Ներկայացվել է՝ 28.04.2025; գրախոսվել է՝ 16.10.2025; ընդունվել է՝ 10.12.2025
Received: 28.04.2025; Revised: 16.10.2025; Accepted: 10.12.2025
Представлено: 28.04.2025; рецензировано: 16.10.2025; принято: 10.12.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.3-173

Ամփոփում – Սույն հոդվածում եռալեզու համեմատական վերլուծության հիման վրա ուսումնասիրվում են գրական արևելահայերենի, գերմաներենի և ռուսերենի անեզական գոյականների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները, որոնք ձևաբանական մակարդակում հանդես են գալիս միայն հոգնակի ձևով կամ եզակի ձևի առկայության պարագայում չեն ապահովում իմաստային և բովանդակային համարժեքություն: Հատկանշական է, որ հոգնակիակերտ ձևի առկայությունը դեռևս բառի թվակարգային հոգնակիության ցուցիչ չէ, քանի որ ձևաբանական հոգնակիությունն ինքնին միշտ չէ, որ պարունակում է իրական բազմաքանակության իմաստային արժեք: Ներկայացված օրինակները ցույց են տալիս, որ անեզական գոյականները բովանդակային մակարդակում կարող են մատնանշել թե՛ եզակիություն, թե՛ հոգնակիություն՝ պայմանավորված համատեքստային, իրավիճակային և լրացուցիչ բաղադրիչ գործոններով: Անեզական գոյականները չեն ընկալվում որպես առանձին, թվով գիտակցվող միավորների ամբողջություն, այլ ներկայացնում են բառակազմական յուրահատուկ կաղապարով ձևավորված իմաստային անքակտելի միավորներ: Եռալեզու համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակակից գերմաներենի և ռուսերենի անեզական գոյականների քանակն ու գործառական տարածումը էապես գերազանցում են արևելահայերենի համապատասխան համակարգը: Վերլուծությամբ հիմնավորվում է այն մոտեցումը, որ անեզականությունը պետք է դիտարկել ոչ թե որպես հոգնակիության իմաստային դրսևո-

րում, այլ որպես ոչ եզակիաձև կառուցվածքի արտահայտություն, որը կառուցվածքային և իմաստաբանական ինքնությունն արժեք ունի թվի քերականական կարգում:

Abstract – Based on a trilingual comparative analysis, the current contribution investigates the structural and semantic properties of pluralia tantum (non-singular) nouns in Literary Eastern Armenian, German, and Russian. At the morphological level, these nouns occur exclusively in the plural or, where a singular form exists, fail to ensure semantic and content equivalence. The mere presence of a plural marker is therefore not, in itself, evidence of grammatical plurality, because morphological plurality does not necessarily encode the semantic value of actual quantitative multiplicity. The examples presented show that, at the level of content, such nouns may denote either singularity or plurality, depending on contextual, situational, and additional compositional factors. They are not conceived as aggregates of individually countable units, but as semantically indivisible formations shaped by a specific word-formation pattern. The trilingual comparison demonstrates that contemporary German and Russian possess both a larger inventory and a broader functional distribution of pluralia tantum nouns than Literary Eastern Armenian. The analysis supports the view that non-singularity should be regarded not as a semantic manifestation of plurality, but as an expression of a non-singular morphological structure with autonomous structural and semantic value within the grammatical category of number.

Аннотация – В данной статье, основанной на трёхязычном сопоставительном анализе, исследуются структурные и семантические особенности существительных типа pluralia tantum (неединичных) в литературном восточноармянском, немецком и русском языках. На морфологическом уровне эти существительные представлены исключительно формой множественного числа либо, при наличии формы единственного числа, не обеспечивают семантико-содержательного тождества. Следует подчеркнуть, что наличие множественной формы само по себе не является показателем грамматической множественности, поскольку морфологическая множественность не всегда содержит семантическое значение реальной количественной множественности. Приведённые примеры показывают, что в содержательном плане такие существительные могут обозначать как единственность, так и множественность, что обусловлено контекстуальными, ситуационными и дополнительными композиционными факторами. Они не воспринимаются как совокупность индивидуально счётных единиц, а представляют собой семантически неделимые образования, сформированные по специфическому словообразовательному шаблону. Трёхязычное сопоставление демонстрирует, что в современном немецком и русском языках количество и функциональное распространение существительных типа pluralia tantum существенно превосходят соответствующую систему восточноармянского языка. Анализ подтверждает точку зрения, согласно которой неединичность следует рассматривать не как семантическое проявление множественности, а как выражение неединственной морфологической структуры, обладающей самостоятельной структурной и семантической ценностью в рамках грамматической категории числа.

Հիմնաբառեր – գոյական, թվաքանակ, անհաշվելիություն, ցուցիչ:

Keywords – Noun, Quantity, Uncountability, marker.

Ключевые слова – существительное, количественность, неисчисляемость, показатель.

Ներածություն

Գոյականի թվի կարգը, լինելով բառափոխական կարգ, ցույց է տալիս առարկայի քանակայնությունը, որի շրջանակում թվակարգի առաջին բևեռը՝ եզակի թիվը, ցույց է տալիս, որ վերջինս վերցված է թվակարգային մեկ քանակայնությամբ, իսկ մյուս բևեռը՝ հոգնակին, մատնանշում է հասկացության մեկից ավելի լինելը:

Գոյականները, ըստ թվակարգային իրացման հնարավորության, դասակարգվում են երեք խմբի՝ գոյականներ, որոնց հատուկ է և՛ եզակի, և՛ հոգնակի թվի կիրառությունը (*գիրք* – *գրքեր*), գոյականներ, որոնք ունեն միայն եզակի իրացման հնարավորություն (լատիներեն *singularia tantum* – միայն եզակի, ինչպես՝ երջանկություն, քաջություն), և գոյականներ, որոնց հատուկ է միայն հոգնակի բառաձևը (լատիներեն՝ *Pluralia tantum* – միայն հոգնակի, ինչպես՝ Ալպեր, Կարպատներ): Գոյականների այս խումբը պիտի դիտարկել թվակարգի կազմում, թե՞ դրանից դուրս, քերականները տարակարծիք են: Այսպես՝ Հ. Պետրոսյանն անեզականները (լատ.՝ *pluralia tantum* «եզակի չունեցող») բնորոշում է որպես գոյականներ, որոնք ձևաբանորեն եզակի թվով կիրառություն չունեն կամ գրեթե չունեն, իսկ առկայության դեպքում չունեն իմաստային համարժեքություն և բովանդակային միևնույն ծավալայնություն, գործածվում են հոգնակի (Պետրոսյան 1987, 228):

Գ. Յիֆոնունը ևս այս գոյականները համարում է թվի քերականական կարգի մաս, սակայն թվակարգի երկու՝ եզակի և հոգնակի բևեռներից միայն հոգնակի ձևերի իրացման հնարավորությամբ, և դրանք չպետք է ուսումնասիրել կարգից դուրս, պարզապես պետք է ընդունել վերջիններիս հարացուցային անլիարժեքությունը (Zifonun 1997, 399): Այս խումբը կազմող բառերը հակադրվում են ոչ միայն հաշվելի, եզակի թվով դրված ու հոգնակիի կազմության հնարավորություն ունեցող գոյականներին, այլ նաև անհոգնականներին:

Վ. Պավլովն անեզականներն անվանում է *միաձև* բառեր, որոնք, ինչպես անհոգնականները, զուրկ են բառային թվից և բովանդակային պլանում ենթադրում են հավաքականության տարբեր բնույթի դրսևորումներ (Павлов 2017, 74): Գոյականների այս խումբը, սակայն, պետք է տարբերակել հավաքական գոյականներից, որոնք թեև բովանդակային պլանում հոգնակի են, սակայն քերականական դրսևորման տեսանկյունից եզակի ձևով հանդես եկող միատեսակ առարկաների կամ երևույթների անքակտելի ամբողջականություն, միատարր ամբողջություն են կազմում, որոնց իրական հաշվելիությունը մնում է չարտահայտված, ինչպես, օր., *երամ* – *стая* – *der Schwarm*, *խումբ* – *группа* – *die Gruppe*:

Սույն հոդվածի նպատակն է եռալեզու քննության ենթարկել գրական արևելահայերենում, գերմաներենում և ռուսերենում առկա անեզական գոյականների իմաստային և կառուցվածքային հայեցակետերում առկա ընդհանրությունները, ինչպես նաև վեր հանել յուրաքանչյուր լեզվին բնորոշ առանձնահատկություններն ու կիրառման ծավալայնությունը:

Անեզական գոյականների ներքին դասակարգումը

Հ. Պետրոսյանն առանձնացնում է անեզականությունը պայմանավորող մի քանի առավել հատկանշական դրույթներ, այսպես՝ հավաքական, վերացական, զանգվածայնություն արտահայտող հասկացությունների հոգնակի կիրառման դեպքում եզակի և հոգնակի բառաձևերի անհամարժեքություն, հասկացության բազմակազմություն, բազմադեպ երևույթներ, որոնք կա՛մ անեզական են, կա՛մ ունեն առավելապես հոգնակի կիրառություն (Պետրոսյան 1987, 228):

Անեզական գոյականները պայմանականորեն կարելի է բաժանել երեք ենթախմբի՝ բուն անեզականներ, որոնք առհասարակ բացառում են բառի եզակի թվով գործածում, ինչպես, օրինակ, որոշ տեղանուններ՝ *Կարպատներ* – Карпаты – die Karpaten, *Ալպեր* – Альпы – die Alpen, *Նիդերլանդներ* – Нидерланды – die Niederlande, *Ամերիկայի Միացյալ Նահանգներ* – Соединённые Штаты Америки – die Vereinigten Staaten von Amerika, *Կորդիլերներ* – Кордильеры – die Kordilleren, *Հիմալայներ* – Гималаи, գերմաներենում, սակայն, der Himalaya եզակի թվով արական սեռի գոյական է: Այս խմբին են դասվում նաև բույսերի, կենդանիների դաս, ընտանիք ցույց տվող բառեր՝ *անողնաշարավորներ* – беспозвоночные – Wirbellose, *կապվազգիներ* – кошачьи, սակայն գերմաներենի դեպքում die Katzen՝ ոչ թե անեզական գոյական, այլ հոգնակի թվով դրված գոյական՝ die Katze – *կապու*, die Katzen – *կապուններ*: Որոշ տեղանունների անեզականության հիմքում ընկած է բաղադրյալ կազմությունը, այն է՝ մի քանի բաղադրիչներից կազմված լինելու գաղափարը: Եթե տեղանունների դեպքում եռալեզու համեմատությունը հիմնականում դրսևորում է ընդհանրական հատկանիշներ, քանի որ վերջիններս կա՛մ փոխառության, կա՛մ պատճենման արդյունք են, ապա նույնը չենք կարող ասել այլ բնագավառի հասկացությունների վերաբերյալ:

Երկրորդ ենթախումբը ձևավորում են այն անեզականները, որոնք դրսևորում են եզակի-հոգնակի հակադրության անհամարժեքություն և համատեքստային պայմանականություն: Անեզական գոյականները չեն գործում մեկուսի, և լեզվի պատմական զարգացման ընթացքում փոփոխվում է նրանց կազմը. հաճախ վերջիններիս կազմը հարստանում է բառի եզակի և հոգնակի բառաձևերի իմաստային տարբերակման և ընդլայնման միջոցով, ինչպես, օրինակ, час – ժամ (եզ.թ.), часы – ժամեր (հզն. թ.), ինչպես նաև *ժամացույց* իմաստով անեզական գոյական, очко – *միավոր*՝ եզակի թիվ, очки՝ *միավորներ* հոգնակի թիվ, ինչպես նաև *ակնոց* (բառացի թրգմ.՝ *ակնոցներ*) անեզական գոյական, городок – городки – *փոքր քաղաք* (եզ. թ.), *փոքր քաղաքներ* – городки խաղի անվանում: Նման դեպքերում հոգնակի բառաձևը ոչ թե առարկայի՝ քանակական, այլ որակային հատկանիշների փոփոխության ցուցիչն է, որի հետևանքով բառը ձեռք է բերում բովանդակային միանգամայն այլ ծանրաբեռնվածություն: Թեև ոչ միշտ, բայց և այնպես նման բառիմաստային համանունների նախնական իմաստը երբեմն մասնակի պահպանվում է անեզական գոյականի բովանդակային պլանում (Булакин 1976, 61): Այս երևույթն առավել ակնհայտ է

համանունների թարգմանության դեպքում: Դիտարկենք մեկ օրինակ: Այսպես՝ час – ժամ – Stunde եզ. թիվ, часы – ժամեր – Stunden հզն. թիվ, часы – ժամացույց – die Uhr եզ. թիվ, часы – ժամացույցներ – die Uhren: Ակնհայտ է, որ ռուսերենի час գոյականի հոգնակի երկու իրացումները դիտարկվող լեզուներում ունեն միմյանցից տարբեր բովանդակություն, սակայն թե՛ հոգնակի թվակարգում, թե՛ անեզական բառաձևի բովանդակային պլանում ընկած է ժամանակի արտահայտման միտումը:

Գերմաներենին ևս խորթ չէ եզակի և հոգնակի բառաձևերի իմաստատարբերակիչ բնույթը, այսպես՝ die Diät – սննդակարգ – диета / рацион, Diäten – օրապահիկ – сыточные, die Auslage – ցուցափեղկ – витрина, die Auslagen – միայն հզն. թվով՝ ծախսեր – выкладки – հաշիվներ (հնցծ.), das Memoire(-s) հուշապիտակ, die Memoiren – հուշեր – мемуары:

Գրական հայերենի դեպքում ժողովրդախոսակցական լեզվին է բնորոշ եզակի և հոգնակի բառաձևերի իմաստատարբերակիչ բնույթը, ինչպես՝ տեղ – տեղեր, սակայն խոսակցական տարբերակում, որպես անեզական գոյական, վերջինս կիրառվում է «անկողին» իմաստով, ինչպես՝ տեղերը գցել՝ «անկողինը պատրաստել» իմաստով (Աղայան 1976, 1429):

Անեզական գոյականների երրորդ ենթախումբը ներառում է այսպես կոչված ներունակ (պոպրենցիալ) անեզականները, որոնք, ունենալով եզակի և հոգնակի բառաձևեր, առավելապես կիրառվում են հոգնակի թվով և կանխորոշում լեզվի հետագա զարգացման ընթացքում եզակի թվի մթագնում և միայն հոգնակի թվակարգով գործածություն, ինչպես՝ медикамент/-ы – դեղ / դեղորայք – das Medikament/die -e, поручень / поручни – բռնակ / բռնակներ – das Geländer/die Geländer (Շведова 1970, 473):

Մարմնի, հագուստի և այլ հասկացությունների բաղկացուցիչ մասեր կազմող բաղադրյալ գոյականները, ունենալով եզակի ու հոգնակի կառույցների հնարավորություն, առավելապես գործածվում են հոգնակի թվով, որի հետևանքով նկատելի է հաշվելի հոգնակիից անեզականի անցման միտում (Виноградов 1986, 138): Ор.՝ лёгкие – թոք(եր) – die Lunge(n), кудри – գանգուրներ (միայն հզն.) – die Locke(-n), плоскогубцы – հարթաշուրթ, փափակաշուրթ / աքցան / աքցաններ – die Flachzunge(-n), подтяжки – փաթափակալ – die Hosenträger(die Hosenträger), тапочки – հողաթափ(եր) – der Hausschuh (die -e), сапоги – երկաթաբաժիկ կոշիկ(ներ) – der Stiefel (անհոգնական), чулки – գուլպա(ներ) – der Strumpf (die -strümpfe), ставни – փեղկ(եր) – der Fensterladen (die Fensterläden): Բերված օրինակները ցույց են տալիս, որ զուգադրվող երեք լեզուներում անեզականների կազմը նկատելիորեն տարբերվում է: Այս ենթախմբերի բառերը մեկուսի չեն գործածվում, և լեզվի զարգացման տարբեր փուլերում տեղի են ունենում տեղաշարժեր: Գերմաներենին և ռուսերենին ևս օտար չէ բառերի մի խմբից մյուսին անցումը: Այսպես, գերմաներենում՝ Tränen/Zähren «արցունքներ», «արտասուք», որոնք լեզվի զարգացման առավել վաղ շրջանում չեն ունեցել եզակի համարժեք տարբերակներ, սակայն արդի գերմաներենում այս բա-

ներն ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի իրացման հնարավորություն. հմմտ.՝ Die Träne «արցունք» - die Tränen «արցունքներ», die Zähre «արցունք» - die Zären «արցունքներ»: Օ. Եսպերսենն այս երևույթը կոչում է կրկնակի հոգնակիություն (Есперсен 1958, 185):

Անհոգնական գոյականների լեզվամտածողական առանձնահատկությունները և ընդհանրությունները

Ռուսերենում, ինչպես նաև գերմաներենում առավելապես անեզական և եզակի թվով սակավ կիրառություն ունեն բազմադեպ երևույթները, մտավոր, հոգեկան, բարոյական հասկացություններ արտահայտող գոյականները, խաղերի, միջոցառումների, տոների, ծիսակատարությունների անվանումները, ժամանականիշ գոյականները, ինչպես՝ ռուսերենում՝ дебри – *թավուր/անտառներ* – das Dickicht՝ եզ. թ., հոգնակիի die Dickichte հնարավորությամբ, каникулы – *արձակուրդ՝* եզ. թ., հզն.՝ *արձակուրդներ* կենսունակ բառաձևի հնարավորությամբ, сутки – *գիշեր ու ցերեկ* – եզ. թ., գերմաներենում՝ der Tag – *օր, Tag und Nacht* – *գիշեր-ցերեկ, будни* – *միօրինակ կամ աշխատանքային օրեր/առօրյա* – der Alltag (առանց հոգնակի, անհոգնական), переговоры – *բանակցություն(-ներ)* – die Verhandlungen, именины – *անվանակոչության օր* (եզ. թ.) – der Namenstag (միայն եզ. թ.), прятки – *պահմարոցի* (եզ. թ.) – das Versteckspiel (եզ. թ.), роды – *ծննդաբերություն* (եզ. թ.) – die Entbindung (եզ. թ.), հոգնակիի հնարավոր կազմությամբ՝ die Entbindungen, похороны – *հուղարկավորություն* – die Beerdigung (եզակի թիվ), հոգնակի՝ die Beerdigungen, выборы – *ընտրություն* (եզակի թիվ) – die Wahlen, սակայն die Wahl եզակի թվի կիրառում ևս, գումարի հետ առնչվող հասկացություններ՝ деньги – *գումար, դրամ* – das Geld՝ առանց հոգնակի կիրառման տարբերակի, իսկ հոգնակի die Gelder բառաձևը նշանակում է արտարժույթի տարբեր միավորներ, наличные – *կանխիկ գումար* – das Bargeld, сверхурочные – *արտաժամյա աշխատանքի վարձավորություն* – der Überstundenzuschlag, алименты – *ալիմենտ, ապրուստադրամ*: Գերմաներենի դեպքում կենսունակ են և՛ միջազգային Alimente տարբերակը՝ որպես անեզական գոյական, և՛ գերմաներեն՝ der Unterhalt, արական սեռի անհոգնական գոյականը: Ինչպես տեսնում ենք, ռուսերենի անեզականները ոչ միշտ են համընկնում հայերենի և գերմաներենի հետ:

Գերմաներենի անեզականների պարագայում ևս ունենք թե՛ համընկնում հայերենի և ռուսերենի հետ, թե՛ տարբերություններ: Գերմաներենի անեզականների թվին են դասվում հիվանդությունների անունները՝ Masern – *կարմրուկ* – Копь, Blattern – *ծաղիկ* – Оспа, Pocken – *ջրծաղիկ* – ветрянка: Ակնհայտ է, որ զուգադրվող մյուս լեզուներում վերջիններս ունեն բացառապես եզակի կիրառություն:

Գերմաներենի հետևյալ անեզականների դեպքում մասնակի համընկնում առկա է հիմնականում ռուսերենի հետ, ինչպես՝ Kosten – *ծախս, ծախսեր* – расходы, Chemikalien – *քիմիկատ(ներ)* – химикаты, Flitterwochen – *մեղրամիս* – ме-

довый месяц՝ հայերենում և ռուսերենում միայն եզակի թվակարգի կիրառում, Realien – *իրական արժեք(ներ)* – реалии, Immobileien – *անշարժ գույք* – недвижимость, Trümmer – *развалина(ы)* – փլատակներ:

Ռուսերենում համասեռ նյութ, զանգվածայնություն ցույց տվող գոյականների զգալի մասը դասվում է անեզականների շարքին, ինչպես՝ сливки – *սերուցք* – Sahne, выжимки – միայն հզն. *քուսպ, չեչ, չանչ* – Trester միայն հզն., помои – *լվացքաջուր, լվացուք* – Abwaschwasser, сласти – *քաղցրավենիք, անուշեղեն* – die Süßigkeit (-en), консервы – *պահածո* – die Konserve(-n), духи – *օծանելիք* – das Parfüm(-n), այս և նման բնույթի բառերը վկայում են, որ իմաստային ծանրաբեռնվածությամբ անեզականներն ու անհոգնականները երբեմն հատվում են, քանի որ միատարրության, համասեռության հատկանիշը մասամբ բնորոշ է նաև անեզական գոյականներին, ինչպես՝ сливки ռուսերենում անեզական, հայերենում և գերմաներենում անհոգնական՝ միայն եզակի կիրառությամբ գոյական՝ *սերուցք* – die Sahne: Ռուսերենի այս բառաշարքի բառերին հայերենի և գերմաներենի պարագայում համապատասխանում են հիմնականում անհոգնական, մասամբ նաև եզակի և հոգնակի հնարավորությամբ գոյականներ՝ հոգնակիի սակավ կիրառությամբ: Հատկանշական է, որ գրական արևելահայերենում եզակի թվով կիրառվող հուզական երևույթներ, բազմակի դեպքեր մատնանշող հասկացությունները, ինչպես նաև բայանունները, գրաբարում ևս ունեցել են հոգնակի/անեզական բառաձևով իրացում, որոնք այժմ ընկալվում են որպես տվյալ բառի եզակի տարբերակ՝ հոգնակի թիվը կազմելով *-եր/-ներ* մասնիկավորմամբ, կամ անհոգնական գոյական, ինչպես՝ *հարսանիք, մեղք, անեծք, աղոթք, կիրք, ցնորք, նզովք* և այլն:

Անեզական գոյականների շարքին են դասվում նաև երկկազմ կամ բազմաբարդ առարկաների անվանումները, երբ մեկից ավելի (հիմնականում երկկազմ կամ գույգ) մասերից բաղկացած իրը, լինելով եզակի, քանակային մեկ ցուցիչով, դրվում է բացառապես հոգնակի բառաձևով: Վ. Բելոշապկովան բազմակազմությամբ է բացատրում երեք սեռերից և ոչ մեկին չպատկանելու և չորրորդ՝ զույգ սեռին (ռուս. парный род), անեզական անշունչ-անշնչավոր հասկացությունների հարելու միտումը, այն է՝ очки – *ակնոց*, сани – *սահնակ*, ножицы – *մկրատ* (Белашапкина 1989, 407): Այս և նման հասկացությունների հոգնակի կազմության պատճառը կառուցվածքային ներքին բարդությունն է. դրանք, ի տարբերություն հաշվելի գոյականների հոգնակի թվի կազմում առկա բաղադրիչ մասերի, առանձին գոյություն ունենալ չեն կարող (весы – *կշեռք(-ներ)* – die Waage(-n), сани – *սահնակ(-ներ)* – der Schlittschuh, щипцы – *ուների(-ներ)* – die Zange (-n), очки – *ակնոց(-ներ)* – die Brille (-n), ножицы – *մկրատ(-ներ)* – die Schere (-n), усы – *բեղեր* – der Schnurbart, առանց հոգնակի ձևի, погоны – *ուսադիր(-ներ)* – die Schulterklappe(-n), шорты – *կիսադաբար(-ներ)* – kurze Hose(-n): Կառուցվածքային տեսանկյունից լինելով հոգնակիաձև՝ բովանդակային պլանում, սակայն, վերջիններս մնում են եզակի, իսկ վերոնշյալ ներքին հոգնակիության

պայմաններում թվի հստակեցման նպատակով տեղին է կիրառել *para* «զույգ» լրացման հետ, ինչպես՝ *две пары очков* (թրգմ. «երկու ակնոց»)։

Ռուսերենում նման անշնչավոր գոյականները, համադրվելով հավաքական թվականների հետ (մինչև հինգը), *одни/трие саней*, կարող են գործածվել ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի իմաստով, օրինակ՝ *одни ножницы – մեկ մկրար*, *трие ножниц – երեք մկրար(-ներ)* (Шведова 1970, 473)։ Անշունչ և թվարկման ենթակա գոյականները, որոնց թիվը միայն նվազագույն համատեքստի առկայության պայմաններում է պարզ դառնում, Ա. Զալիզնյակը բնորոշում է որպես անեզականների միջուկ կազմող առանցքային բառեր։ Այս անեզականների եզակի և հոգնակի թվի իմաստային առանձնահատկությունները մասնիկավորմամբ չեն արտահայտվում, կրում են ներքին բնույթ, սակայն դա ոչ թե հերքում է թվակարգի երկու իրացումների հնարավորությունը, այլ մատնանշում դրանց համանունությունը (Зализняк 2002, 58)։

Թվակարգի արտահայտման տարբերակ է նաև վերջինիս գործածումը թվական կամ այլ խոսքի մաս լրացումներով, եթե բառը չունի թվակարգային հատուկ նշույթավորում, ինչպես՝ *пальто – վերարկու(-ներ)* – *der Mantel* (*die Mäntel*), *кафе – սրճարան(-ներ)* – *das Café* (*die Cafés*), *такси – տաքսի* – *das/der Taxi (-s)*, *кенгур – կենգուրու* – *das Känguruh (-s)*, ինչպես՝ *Кафе закрыто* (թրգմ. «սրճարանը փակ է»), *кафе закрыты* (թրգմ. «սրճարանները փակ են»)։ Այս գոյականները Ա. Զալիզնյակը բնորոշում է որպես բառաձևի ներսում թվակարգային երկու՝ եզակի և հոգնակի քանակայնության բովանդակություն կրող հասկացություններ, որոնք, սակայն, իրենց արտահայտությունն են ստանում համանուն գոյականների միջոցով, և՛ եզակի, և՛ հոգնակի թվի դեպքում արտահայտվում են նույն հնչյունական ծանրաբեռնվածությամբ, իսկ քանակի հստակեցումը հնարավոր է դառնում միայն լրացումների կամ նվազագույն համատեքստի առկայության պայմաններում (Зализняк 2002, 60)։

Գրական արևելահայերենում, ի տարբերություն հին գրական հայերենի, որտեղ անեզական գոյականները զգալի թիվ են կազմում, գոյականների այս խումբը խիստ սահմանափակ է (Ջահուկյան 1974, 181)։ Գրական արևելահայերենում կենսունակ են հին գրական հայերենից և միջին հայերենից ժառանգած բառաձևեր, որոնց մի մասը հնդեվրոպական երկակի թվին բնորոշ զույգ կամ համաչափ երկու կողմով տեղակայված առարկաներ նշող վերապրուկներ են, ինչպես՝ *ակն – ակունք*, միջին գրական հայերենում *ծեովի*, *ականջվի*, *ծնկվի* (հայերենի պարագայում՝ հին գրական հայերենի այն բառաձևերում, որոնք ունեն հոգնակիի այլ կազմություն), ռուսերենում՝ *очи* «աչքեր», *уши* «ականջներ», *рукава* «թեզանիք», *лыжи* «դահուկներ» բառաձևերում, գերմաներենում՝ *eß – ihr* «դուք» և *enk – euch* «ձեր» դերանունների համար։ Անեզականների մի մասն էլ ենթարկվել է արտահայտության ձևի ու եղանակի փոփոխման՝ գրական արևելահայերենում կազմելով հոգնակիի ձևեր, ինչպես՝ *ելք – ելքեր*, *մուրք – մուրքեր*, որտեղ գրաբարյան անեզականների *-ք* ածանցն այլևս չի գիտակցվում որպես հոգնակիակերտ մասնիկ, օրինակ՝ *հանք – հանքեր*, *անեծք – անեծքներ*,

ասք – ասքեր, գրկանք – գրկանքներ, փանջանք – փանջանքներ, խոսք – խոսքեր, մաղթանք – մաղթանքներ, հանգամանք – հանգամանքներ: Գրաբարյան անեզականներից մի քանիսը հանդես են գալիս գրական արևելահայերենում որպես անհոգնական գոյականներ (*singularia tantum*), ինչպես՝ *կամք, վարք*, մի մասը պահպանել է իրեն համարժեք եզակի բառաձևը՝ կազմելով զուգաձևություն կամ նույնիմաստ բառաձևեր, ինչպես՝ *հրավեր – հրավերք, հնար – հնարք*, կամ գրական արևելահայերենում կենսունակ է դարձել եզակի բառաձևը, ինչպես՝ *երես, գիրկ* (Մարգարյան 2004, 83):

Ռուսերենում և գերմաներենում կան родители «ծնողներ» - die Eltern «ծնողներ» անեզական բառաձևերը, իսկ հայերենում *ծնող – ծնողներ* բառի և՛ եզակի և՛ հոգնակի տարբերակները, որոնք երկուսն էլ կենսունակ և գործածական են: Ի տարբերություն գրական արևելահայերենի, ռուսերենում և գերմաներենում այս բառի համարժեք եզակի ձևերը չկան, և ծնողներից մեկին միայն նշելու համար գործածվում են *հայր, մայր*՝ отец, мать, գերմաներենում՝ die Mutter, der Vater գոյականները, իսկ der Elternteil «ծնող, ծնողներից մեկը», գրեթե դուրս է եկել գործածությունից, որի հետևանքով տեղի է ունեցել հակառակ երևույթը՝ եզակի թվով բառաձևի նշույթավորում և հոգնակի բառաձևի աննշույթ և հաճախակի գործածություն, ինչպես՝ die Ferien «արձակուրդներ» - der Ferientag «արձակուրդային օր», die Kosten «ծախս, ծախք» - der Kostenanteil «ծախսի մի մաս», die Eltern «ծնողներ» - der Elternteil «ծնողներից մեկը», die Geschwister «քույր ու եղբայր», der Geschwisterteil (ինչպես նաև՝ das Geschwister) «եղբայրներից և քույրերից մեկը»: Համանման ձևով ռուսերենում՝ новобрачные, молодожены - *նորապսակ զույգ, նորապսակներ* - das Brautpaar (եզակի թվով կիրառություն) / die Neuvermählten (հոգնակի թիվ), родные - *հարազատ (-ներ)* - der/die Anghörige (-n), գերմաներենի համար՝ Gebrüder - *եղբայր(-ներ)* - брат (братья), Geschwister - *քույր և եղբայր, նաև՝ քույրեր և եղբայրներ* - братья и сёстры, Gezeiten - *մակընթացություն և տեղափոխություն* - приливы и отливы: Գերմաներենի անեզականների դեպքում ևս, ինչպես տեսնում ենք օրինակներից, չունենք լիարժեք համապատասխանություն: Այս շարքի բառերը կարծես միջակա դիրք են գրավում անեզականների ու հաշվելի գոյականների հոգնակի բառաձևերի միջև, քանի որ բառիմաստով ներկայանում են որպես առանձին միավորների ամբողջություն, սակայն իրենց մեջ միավորում են իրար ամբողջովին կամ ոչ լիովին նման, ինչպես նաև տարբեր սեռի անդամներ: Այսպիսով, բերված օրինակների վերլուծությունը ցույց է տալիս, որ անեզականները զուգադրվող երեք լեզուներում էլ, ունենալով հոգնակիաձև կազմություն, բովանդակային պլանում ցույց են տալիս և՛ եզակիություն, և՛ հոգնակիություն, ինչը պայմանավորում են իրավիճակը, համատեքստը կամ ուղեկցող լրացումները:

Անշուշտ, առկա նմանություններին զուգահեռ, անհերքելի է նաև տարբերությունների առկայությունը, որը պայմանավորված է հնչյունաբանական, բառակազմական, ինչպես նաև մշակութային ու լեզվամտածողական առանձնահատկություններով: Այս գործոնների անտեսումն է, որ հանգեցնում է թարգ-

մանական սխալների, ինչպես տարածված՝ *ամառային արձակուրդներ, ակնոցներ* (մեկ ակնոցի համար), որոնք բառացի ռուսերեն летние каникулы (գերմաներենում ևս՝ die Ferien – միայն հզն. կիրառություն-*արձակուրդներ*, հետևաբար՝ die Sommerferien – ամառային արձակուրդներ), очки (գերմ.՝ եզ. և հզն. թվի առկայություն՝ die Brille – ակնոց – die Brillen – հզն.՝ ակնոցներ) բառերի թարգմանություններն են՝ անտեսելով այն հանգամանքը, որ այս բառերը ռուսերենում անեզական են, իսկ հայերենում՝ եզակի և հոգնակի տարբերակներ ունեցող բառեր: Ակներն է, որ անեզական գոյականներին բնորոշ է ընդհանուր մի հատկանիշ, այն է՝ վերացական կամ հավաքական բնույթ, բազմակազմ ձև:

Անեզականները ոչ թե թվի իրացման բացառություններ են, այլ հասկացություններ, որոնք հանդես են գալիս միայն հոգնակի բառաձևով, կրում հոգնակի թվի հարացույցի իրացման առանձնահատուկ դրսևորում և ցույց են տալիս բազմակազմ առարկաներ, տեղանուններ և երևույթներ (Duden 2016, 186):

Եզրակացություններ

1. Եթե տեղանունների դեպքում եռալեզու համեմատությունը հիմնականում դրսևորում է ընդհանրական հատկանիշներ, քանի որ վերջիններս կա՛մ փոխառության, կա՛մ պատճենման արդյունք են, ապա նույնը չենք կարող ասել այլ հասկացությունների վերաբերյալ:

2. Բերված օրինակների վերլուծությունը փաստում է, որ անեզականները զուգադրվող երեք լեզուներում էլ, ունենալով հոգնակիաձև կազմություն, բովանդակային պլանում ցույց են տալիս և՛ եզակիություն, և՛ հոգնակիություն, ինչը պայմանավորում են իրավիճակը, համատեքստը կամ ուղեկցող լրացումները:

3. Անեզական գոյականները ցույց են տալիս, որ հոգնակի բառաձևը միշտ չէ, որ մատնանշում է երևույթի հոգնակիությունը:

4. Եռալեզու ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ի տարբերություն գրական արևելահայերենի, ժամանակակից ռուսերենում և առավելապես գերմաներենում անեզական գոյականներն ավելի մեծ թիվ են կազմում:

5. Անեզականությունը չի ենթադրում բառի հոգնակիություն թվակարգային մեկից ավելի իմաստով: Այստեղ բառի կազմում ներառված են ոչ թե անջատ, միմյանցից առանձին գիտակցվող հասկացական երևույթներ, այլ վերջինիս մաս կազմող բաղադրիչները տվյալ երևույթը ներկայացնում են բառակազմական ուրույն կաղապարով և կազմում անքակտելի միասնություն, որից կարելի է ենթադրել, որ հասկացության ոչ եզակիաձև կառույցը դեռ բառի հոգնակիություն չէ:

Շնորհակալական

Սույն հոդվածի թեմայի ընտրության և առանցքային հարցերի վերաբերյալ արված կարևոր դիտարկումների ու նկատառումների համար երախտագիտություն ենք հայտնում մեր գիտական ղեկավարին՝ ԵՊՀ հայ բանասիրության ֆա-

կուլտետի հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ Վարդան Զորիկի Պետրոսյանին:

Գրականություն/References/Литература

1. Աղայան Է. 1976, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան»:
Aghayan E. 1976, Explanatory Dictionary of Modern Armenian, Yerevan, Hayastan (in Armenian).
2. Անդրեասյան Գ. 1976, Գերմաներեն-հայերեն բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.:
Andreasyan G. 1976, German-Armenian Dictionary, Yerevan, Yerevan State University Press (in Armenian).
3. Ղարիբյան Ա. 1977, Ռուս-հայերեն բառարան, Երևան, «Հայաստան»:
Gharibyan A. 1977, Russian-Armenian Dictionary, Yerevan, Hayastan (in Armenian).
4. Մարգարյան Ա. 2004, Հայոց լեզվի քերականություն, Ձևաբանություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
Margaryan A. 2004, Grammar of the Armenian Language: Morphology, Yerevan, YSU Press (in Armenian).
5. Պետրոսյան Հ. 1987, Հայրենագիտական բառարան, Երևան, «Հայաստան»:
Petrosyan H. 1987, Dictionary of Homeland Studies, Yerevan, Hayastan (in Armenian).
6. Զահուկյան Գ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ.:
Jahukyan G. 1974, Fundamentals of the Theory of Modern Armenian, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR Press (in Armenian).
7. Белашапкова А. 1989, Современный русский язык, Москва, «Высшая школа».
Beloshapkova A. 1989, Modern Russian Language, Moscow, Vysshaya Shkola (in Russian).
8. Буланин Л. 1976, Трудные вопросы морфологии, Москва, «Просвещение».
Bulanin L. 1976, Difficult Questions of Morphology, Moscow, Prosveshchenie (in Russian).
9. Виноградов В. 1986, Русский язык. Грамматическое учение о слове, Москва, «Высшая школа».
Vinogradov V. 1986, Russian Language: The Grammatical Doctrine of the Word, Moscow, Vysshaya Shkola (in Russian).
10. Есперсен О. 1958, Философия грамматики. Пер. с англ. Пассека В. В. и Сафроновой С.П.; под ред. и с предисл. проф. Ильиша Б.А., Москва, «Наука».
Jespersen O. 1958, The Philosophy of Grammar. Translated from English by Passek V.V. & Safronova S.P.; edited with a preface by Prof. Ilish B.A., Moscow, Nauka (in Russian).
11. Зализняк А. 2002, Русское именное сказуемое, Москва, «Наука».
Zaliznyak A. 2002, The Russian Nominal Predicate, Moscow, Nauka (in Russian).

12. Павлов В. 2017, Грамматическое и лексическое число существительного. Международный журнал гуманитарных и естественных наук, N 5, 68–82.
Pavlov V. 2017, The Grammatical and Lexical Number of the Noun. International Journal of Humanities and Natural Sciences, N 5, 68–82 (in Russian).
13. Шведова Н. 1970, Грамматика современного русского литературного языка, Москва, «Наука».
Shvedova N. 1970, Grammar of the Modern Russian Literary Language, Moscow, Nauka (in Russian).
14. Duden 2016, Dudenredaktion, Die Grammatik: Unentbehrlich für richtiges Deutsch (9, vollständig überarbeitete Auflage, Bd. 4), Berlin, Dudenverlag.
15. Zifonun G., Hoffmann L., Strecker B. 1997, Grammatik der deutschen Sprache, Bd. 1, Berlin-New York, Walter de Gruyter.